ձուածողք՝ որ մոլար մեկնութիւն և իմաստ կու տային գրոց խօսքերուն։

Լ՚ 181. տող 13. « Քանզի կէսք այսպէս ասացին զերկրէ թէ զգետի կերպարանս ունի, և կէսքն դուպանի նմանեցուցին, կէսքն սկտեղ »։

Ուղղ. անգամի ?

Լ՚ 181. տող 16. « Եւ կէսքն թէ հարթ հաւասար իսկ է յամենայն կողմանց, և կայ ի միջավայրս վայրոց, և ճախարակագործ կերպարանաց նման է և կէսքն նչուրի կերպարանաց նմանեցուցին, ոմանք խորամիջոց անուանեցին »։

Ուղղ. խորի ?

Նախընթաց « Ն » կարելի է սխալմամբ առնուած է « կէսքն »ի դիմորոշէն. խոռի կերպարանքը (χωνος կամ κονος) գմբեթարդ է, ուստի հորիզոնը իւր շրջանիր կերպարանքով նման է գտակի, ուռած դէպ ի դուրս. որի հակադիրն է՝ « խորամիջոց », որ նման է թասի, սկտեղ կամ սկաւառակի։

Լ՚ 182. տող 24. « Ի միտ առցուք՝ թէ զիաըղ և զրպէս ընթացաւ բանն Ասուծոյ ընդ արարածս և որպէս սկիզբն երեւեցաւ, նոյնպէս և ճեպ փութոյն հասուտեցաւ. բանն յայնժամ յորդորեցաւ, և գործն մինչեւ ցայժմ եւս կարգի գայ՝ ամենայն ազգ զեռնոց, և մինչեւ ի կատարումն ժամանակի, նոյնպէս կայ մեայ յաբարածս »։

Ուղղ. Բարբառեցաւ.... գայ՝ առ ամենայն »։

Բանն ի սկզբանն բարբառեցաւ, ասաց և եղեւ, իսկ գործն մինչեւ ցայսօր կը շարունակուի ըստ բնութեան անձնիւր արարածոց շնչաւորաց և անշնչից։

Բարբառեցաւ ուղղագրութիւնը կը գտնուի Աւետնեանց ձեռագրին մէջ (տես Նոր բայրի բառաքննութիւն, էջ 66)։

Լ՚ 186. տող 33. « Դարձեալ և ոմն ի մտաւոր մարդկանէ, որ միտ եդեալ հաչեցի փութով ընդ փոփոխումն իրաց բազմաց. սպասեաց եգիտ զոզնի մի ցամաքային »։

Ուղղ. « Նայեցաւ որովհետեւ նա որ սպասեաց եգիտ, կը հետեւի որ « միտ եդեալ հայեցաւ »։

Հ. Գ. ՆԱՒՊԵՏԵԱՆ

Շարայարելի

ԵԻՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

ՀԱՑԵՐԷՆՈՒՄ

Դոկտ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆՑԻՆ

(Շար. Բազմ. 1907 էջ 444)

Շատ անգամներ է պատահում որ հայ ընթերցողը մի հայերէն տեխնիկական բառ հասկանալու համար՝ մտածի նախ թէ ինչ է նրա եւրոպական համապատասխան բառը, եթէ գրողը արդէն բարեւթիւնը չէ ունեցել նրան նշանակել փակագծի մէջ։

Բայց ինչ օգուտ մի բառից՝ որին իմանալու համար՝ պէտք է նախ թարգմանել! մասնիկները վերլուծել, նրանց եւրոպական ձեւի վերածել, և ապա մի միտք դուրս բերել, այն էլ եթէ Աստուած ողորմի!

Գաղափարը բառերից վեր է, պարոններ, և ամենամեծ ազգասէրները նրանք չեն որ վիճում են մի քերականական մասնիկի ազգայնութեան վերա։ Շովինիզմը ո՛չ մի տեղ այնքան փոքրոգութեան, անձուկ մտքի տպաւորութիւն չի թողնում որչափ երբ ցածանում է մինչեւ բառագիտութիւնը։

Բարեբաղդաբար այդպէս չեն եղել մեր հայրերը։ Նրանք ասել են Պիպոկ և ոչ թէ Ամերիկայ, այն ինչ մենք պէտք է խղճմտանքից տանջւենք Հորիզ ասելուց յետոյ!

Ինչ պատճառով կաւկասահայերը կորցրել են իրանց դասը այս խնդրում.

1. — Նրանք գոհ են եղել պաշտպանողականով, այն ինչ պէտք էին նրանք յարձակողական սկսել շովինիստ և ազգասակար ուղղութեան դէմ.

2. — Նրանք այնքան զեղծման և ծայ-

digitised by A.R.A.R.@

բայհոլթիւնների են գնացել իրանց սկզբունքի գործադրութեան մէջ՝ որ նրանք մի անգամից ատելի են դարձրել նրան։

Նախորդ յօդուածումս ես ցոյց տւի թէ չպէտք է սկզբունքներ տալ հասարակութեան, այլ նրանց գործադրութիւնը. սկզբունքը մանաւանդ էների համար է, նրանց իրագործուած ձեւը՝ ժողովրդեան. կառավարը պէտք է գործատների մէջ մնայ, ձեռագործը վաճառի. ես խոստացայ, օրինակի համար, կազմել քաղաքագիտական (պոլիտիկական) բառերի ցուցակը։

Politique = քաղաքագիտութիւն. — Գործ են ածւում և քաղաքականութիւն և Պոլիտիկա. երկուսն էլ մի անգամից դատապարտելի են. Politique ածականը հարկ կը լինի թարգմանել կամ քաղաք–ական կամ քաղաքական որ շփոթւում է civil բառի հետ. (օր. քաղաքական պաշտօն); կարիք չկայ դարձեալ Պոլիտիկա բառը գործածելու, և Ֆրանսերէն ականը (ique) կրկնելով ասելու՝ Պոլիտիկական։ Պէտք է ասել ուրեմն օրագիր քաղաքագիտական, գրական, և այլն։

Diplomatie. — Դիւանագիտութիւն, Դիւանագէտ, և այլն։

ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՌԵՐ

Absolutisme, absolutiste = Աբսոլիտիզմ, Աբսոլիտիստ. — այս բառերը պէտք է ընդունել հայերէնում. բացարձակապետութեան, բացարձակապետական անհանդուրժելի բառեր են. իսկ համաձայնած ձեւով արձակապետութիւն մի այլ հակառակ միտք կարող է յառաջ բերել (անիշխանութիւն, անարխիա)։

Légitimisme, légitimiste = Լեգիտիմիզմ, լեգիտիմիստ. — պակասում է սրա արժանաւոր հայերէնը։

Autocratisme, autocrate = Ինքնակալ, ինքնակալութիւն։

Monarchie, monarque, monarchiste = Միապետութիւն, միապետ, միապետական։

Impérialisme, impérialiste = կայսերապետութիւն, կայսերապետական. — սրանց չպէտք է կայսերականութիւն թարգմանել, որովհետև ստիպւած կը լինէինք նոյն կայսերական բառով թարգմանելու և Impérialiste և Impérial բառերին։

Théocratie = Աստուածապետութիւն։

Aristocratie, aristocrate. — Ազնուապետութիւն, ազնուապետ, ազնուապետական, ազնուապետականութիւն։

Հայերէն այս բառերը շատ աւելի յարմար են՝ քան եւրոպական բառերը. Արիստոկրատ բառը նշանակում է ոչ միայն partisan de l'aristocratie, այլ և membre d'une aristocratie. իսկ Արիստոկրատիա՝ նշանակում է և՛ ազնուական դասակարգ, և՛ ազնուական դասակարգը պաշտպանող կուսակցութիւն. այսպէս Արիստոկրատ և Արիստոկրատիա բառերի մէջ կան չորս մտքեր, միմեանց հետ շփոթւած, այն ինչ հայերէն բառը մեզ հնարաւորութիւն է տալիս՝ նրանց զանազանել միմեանցից. այսպէս կարելի է չորս զանազանութիւններ դնել. Ազնուապետութիւն = Ազնուական դասակարգ, Ազնուապետ = Ազնուական դասակարգի պատկանող, Ազնուապետական = Ազնուականների կուսակից, Ազնուապետականութիւն = Ազնուականների նպաստաւոր կուսակցութիւն կամ սկզբունք, և այլն։

Նոյն տեսակի եւրոպական բառերը համարեա բոլորն էլ հայերէնից թոյլ են, միայն Monarchie բառը ունի այն զանազանութիւնները որոնք ստացւում են հայերէնի բաղադրական վերին աստիճանի ճկունութիւնից։ Այսպէս Monarchie, monarque, monarchiste, monarchisme բառերի մէջ միայն նկատում ենք հայերէնի չորս աստիճանները։

Torysme, tory = Թորիզմ, Թորի, անգլիացի ազնուապետական։

digitised by A.R.A.R.@

Stratocratie = *Բանակապետութիւն*
Timocratie = *Ձ՛որեապետութիւն*
Plutocratie = *Հարստապետութիւն*
Gérontocratie = *Ծերապետութիւն*
Gynécocratie = *Կնապետութիւն*
Ethocratie = *Բարոյապետութիւն*
Burocratie = *Բիւրոկրացիա, Բիւրոկրատ*

ԴԱՄԿԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՌԵՐ

Démagogie, Démagogue = *Դեմագոգիա, Դեմագոգ*
Démocratie, Démocrate = *Դեմոկրատիա, Դեմոկրատ. — Քիւրքահայերը ասում են Իամկապետութիւն. դա ամենաանյաջող Թարգմանութիւններից է. այլ է ժողովուրդը, այլ է Իամիկը.* Démocratie *պէտք է Թարգմանուէր ժողովրդապետութիւն, եթէ դա մի այլ միտք չունենար, իսկ նրանք որ Թարգմանում են Իամկապետութիւն երևի դեռ չեն խմացել որ այս աշխարհումս գոյութիւն ունի և* Ochlocratie *որ ուղղակի համապատասխանում է Իամկապետութիւն բառին, որպէս և*
Laocratie = *Ամբոխապետութիւն։ Իամկապետութիւն բառը ծնունդ է տգիտութեան և անհետաւոտ վարմունքի։*
Social – démocrate = *Սոցիալ – Դեմոկրատ*
Constitutionnel – démocrate = *Սահմանադիր – Դեմոկրատ*
Socialisme, socialiste = *Սոցիալիզմ. սոցիալիստ. — փորձը ապացուցել է վաղուց որ Ընկերվար, ընկերվարական անընդունակ են կեանքի, ժողովրդականութեան և Սոցիալիզմ նըւիրականացած է ժողովրդի հաւատնուիեամբ։*
Օրինակներ կը լինէր ասել, օրինակ, Ընկեր ընկերվարականներ, որպէս ասում ենք Ընկեր Դաշնակցական, կամ Ընկեր Դեմոկրատ, և այլն։
Constitution = *Սահմանադրութիւն*
Commune, communiste = *Կոմմիւն, կոմմիւնիստ*
Cadette = *Կադէտ*
Octobriste = *Հոկտեմբերեան*
Progressiste = *Պրոգրեսիստ, (յառաջադիմական անբաւական է, լինելով տարտամ և ընդհանուր) և այլն։*

Որպէս երեւում է այս քննութիւնից, քաղաքագիտական բառերի վերաբերմամբ մի քանի մասերում հայերէնը աւելի բաղդատուր է քան եւրոպական լեզուները։

Փոխ պէտք է առնել Աբսոլիւտիզմ, Լեգիտիմիզմ, Բիւրոկրատիա, Կոմմիւն, Կադետ և Պրոգրեսիստ, Դեմոկրատ, Սոցիալիստ բառերը։

Ես մի նմոյշ տւի սիստէմը աւելի յստակ կերպով ներկայացնելու համար, թողնում եմ մասնագէտներին՝ ամբողջացնել պատկերը, խոյս տալով և՛ ամէն ինչ եւրոպականացնելու և՛ ամէն ինչ հայացնելու անիմաստ ուղղութիւններից։ Պէտք է զգոյշ լինել և՛ բառագիտական շովինիզմից և հայ լեզւի տգէտ լինելուց։

Շահ – Արմէն

ԳԵՒ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԻՆԻ ՎՐԱՅ

Յաւելի է մտածել որ Պ. Բասմաճեան գունաշփոթման ախտէն զարնուած ըլլայ ճիշդ այս օրերուն ուր Բազմավէպ կը ջանար գալտնիփվի համազօր հայերէնը հայթայթամտել։ Հաստատ կերպով հաւաստալու է ընդհակառակն որ Պ. Պետրոսի կենաց վերջի հանգամանքներն են որ կը գունաշփոթցնեն։

Պ. Բանասէրը իր պատասխանին մէջ միտքը աղէկ չէ որոշած. արդեօք կ՛ուզէ պնդել թէ Պ. Պետրոսի գլխուն վրայ ապառանձին կերպով իբր Հայոց թագաւոր պրոտակտորութեան հանդէս չէ՛ կատարուած, թէ Հայոց թագաւոր չէ եղած, Բան իս ժողովուրդ մը, որ ընտրելու կարողութիւն ունի, երբ անձ մը իրեն թագաւոր կ՛ընտ-

digitised by A.R.A.R.@